



ԿԿՈՒ

Մանկապատանեկան Թերթիկ

ՓԵՏՐՈՒԱՐ Գ - 2024
Թիւ 6



Թիւր պատրաստեց՝
Մարտին ԱՐՄԵՆ-ՇԱՀԻՆԵԱՆ
Նկարազարդեց՝
ՌԱՅՅԻ ԲԷՇԻՇԵԱՆ

ՏԵԱՆՆԸՆԴԱՌԱԶ

Տեանընդառաջ բառը կազմուած է Տեան, ընդ եւ առաջ բառերէն, որ կը նշանակէ Տիրոջ առաջ ելլել, Տերը դիմաւորել:

Տեանընդառաջը թե՛ քրիստոնեական եւ թե՛ հեթանոսական տօն մըն է: Որովհետեւ Քրիստոսի քառասորեայ տաճար ընծայման տօնն է: Նախաքրիստոնեական շրջանին հայոց կրակի Միհրը աստուածը՝ վերստին կը յիշատակուի Տեանընդառաջի օրը՝ հրավառութեամբ:

Քրիստոնեական հասկացողութեամբ Աստուածորդուն քառասորեայ տաճար ընծայումը եկած է հրեայ ժողովուրդին Հին Ուխտի օրէնքներէն, որ ամեն ընտանիքի անդրանիկ արու զաւակը պէտք էր տաճար տանիլ՝ Աստուծոյ նուիրելու:

Տեանընդառաջի կրակը իր հետ կը բերէ նաեւ բարեխառնութիւն եւ հունձքերու առատութիւն: Այս մէկը շարունակութիւնն է այն հաւատքին, որ մեր նախնիքը ունէին՝ կրակէն սպասելով ամեն բարիք:

Մինչեւ օրս հայկական այս աւանդութիւնը կը պահպանուի: Փետրուար 13-ին, երեկոյեան ժամերգութեան ընթացքին, Տեանընդառաջի յատուկ շարականներ կ'երգեն եւ ատեան դրուած երեք մեծ աշտանակներուն մոմերը կը վառեն: Մարդիկ իրենց մոմերը կը վառեն այդ աշտանակներէն ու տուն կը տանին:



ԱՌԱՎ

ԷՇՆ ՈՒ ՎԱԳՐԸ

Էշը վագրին ըսաւ.

- Գիտե՞ս, որ խոտը կապոյտ է:

Վագրը պատասխանեց.

- Ո՛չ, խոտը կանաչ է:

Վե՛ճ բռնկեցաւ: Անոնք որոշեցին երթալ անտառի թագաւորին՝ առիծին քով, որպէսզի լուծեն իրենց խնդիրը:

Տակաւին չհասած առիծին գահը, էշը սկսաւ բարձրաձայն պոռալ.

- Ճիշդ է, չէ՞, որ խոտը կապոյտ է:

Առիծը պատասխանեց.

- Այո , ճիշդ է, խոտը կապոյտ է :

Էշը ուրախացաւ եւ շարունակեց.

- Վագրը համաձայն չէ, խնդրեմ պատժե՛ զինք:

Գազաններուն թագաւորը վճիռ կայացուց եւ յայտարարեց.

- Վագրը կը պատժուի 5 տարի լռութեամբ:

Էշը ուրախացած ցատկոտեց եւ գոհացած գնաց, կրկնելով.

- Խոտը կապոյտ է ...

Վագրը ընդունելով իրեն տրուած պատիժը, հարցուց առիծին.

- Ինչո՞ւ համար զիս պատժեցիք, չէ՞ որ խոտը իսկապէս կանաչ է:

Առիծը պատասխանեց.

- Իսկապէս խոտը կանաչ է:

- Ուրեմն ինչո՞ւ համար պատժուեցայ,- հարցուց վագրը զարմացած:

Առիծը պատասխանեց.

- Պատիժը ոչ մէկ կապ ունի խոտին գոյնին հետ: Պատիժը քեզի նման խելացի կենդանիներուն համար է, որոնք պէտք չէ ժամանակ վատնեն էշին հետ վիճելով ...

Ժամանակի ամենասարսափելի կորուստը կ'ըլլայ ընդհանրապէս յիմարներու եւ տգէտ մարդոց հետ վիճելով, որոնց համար ճշմարտութիւնը կարելոր չէ, այլ միայն իրենց համոզումներուն եւ կարծիքներուն պարտադրանքը:

Երբեք անիմաստ վեճերով ժամանակ մի՛ վատնեք ...

Կան մարդիկ, որոնց որքան ապացոյց եւ վկայութիւն տաս, նոյնն է, չեն կրնար հասկնալ՝ քանի որ կուրցած են ե՛ւ ատելութենէն, ե՛ւ փառքի հասնելու ձգտումէն:

6	+		=	14
+		+		+
	+	9	=	
=		=		=
	+	17	=	30


Կրնա՞ս լուծել:



Կրնա՞ս գտնել կորսուած առարկաները: փնտռե՛ գանոնք եւ գտածներդ գունաւորե՛:




Գունաւորե՛ հետեւեալ պատկերը կողմի պատկերին գոյներուն համաձայն:



Թիւերը բազմապատկելով իւրաքանչիւր պատկեր արդիւնքին համաձայն կտրե՛ եւ իր յարմար տեղը դիր:

2x5	3x5	2x4	3x4
5x5	3x6	3x7	3x3
2x4	3x2	4x4	4x5



ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ

Արագածոտնի մարզը կը գտնուի Հայաստանի արեւմտեան մասը: Մարզը երեք կողմէ շրջապատուած է լեռներով, որոնցմէ մէկը Հայաստանի ամենաբարձր լեռնագագաթ՝ Արագածն է (4,090 մ): Արագածոտնի մարզկեդրոնը եւ ամենամեծ քաղաքը՝ Աշտարակն է:

ԱՐԱԳԱԾ ԼԵՌ

Արագած լեռը կոչուած է Հայկի որդի Արամանեակի անունով: Լեռը Հարաւային Կովկասի ամենաբարձր գագաթն է եւ մշտականապէս կը գրաւէ լեռնազնացներու եւ բնագետներու ուշադրութիւնը: Լեռան գագաթէն կարելի է տեսնել Փոքր եւ Մեծ Կովկասի լեռնաշղթաներուն մեծ մասը:

Արագածը յայտնի է իր եզակի բնութեամբ՝ ալպիական մարգագետիններով եւ սառնորակ աղբիւրներով: Հեռաւոր անցեալին՝ լեռան վրայ հրաբուխի ժայթքումներէն յառաջացած խառնարանը աշխարհի ամենամեծ խառնարաններէն մէկն է: Արագած բարձրանալու լաւագոյն ժամանակը Յունիսէն Օգոստոս ժամանակաշրջանն է, երբ լեռնային արահետները չոր ու անվտանգ կ'ըլլան: Ձմրան, երբ լանջերը ձիւնով կը ծածկուին, մասնագետ լեռնազնացներն են միայն, որոնք դահուկներով կրնան յաղթահարել բարձրունքը:

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿԼԻՄԱՆ

Արագածոտնի մարզի կլիման բազմազան է՝ մակերէւոյթի բարձրութիւններու մեծ տատանումներուն պատճառով: Արագածի ամենաբարձր գագաթը, գրեթէ ամբողջ տարին ձմեռ է, իսկ լեռան ստորոտը՝ ամառ, որ մինչեւ հոկտեմբեր ամիս կը տեւէ:

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՏԵՍԱՐԺԱՆ ՎԱՅՐԵՐԸ

Մարզը ունի անձեռնմխելի (պահուած) միջնադարեան յուշարձաններ, ինչպէս Ամբերդի ամրոցը, միջնադարեան վանքեր՝ (Սաղմոսավանքը եւ Օհանավանքը):

Հայոց Այբուբենի հիմնադիր Սուրբ Մեսրոպ Մաշտոցի գերեզմանը կը գտնուի Օշական գիւղը՝ Արագածոտնի մարզկեդրոնին մօտ: Հայոց համար այս վայրը ազգային սրբատեղի է:

Արագածոտնի մարզը կը գտնուի նաեւ Բիւրականի յայտնի աստղադիտարանը, որ հիմնադրուած է ղեկավարուած է հայ գիտնական եւ աստղագետ՝ Վիքթոր Համբարձումեանի կողմէ:

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿԶՈՒԹԻՒՆԸ

Ըստ պաշտօնական մարդահամարի, Արագածոտնի բնակչութիւնը կը կազմէ 132.925 մարդ: Բացի հայերէն, այնտեղ կը բնակին նաեւ եզիտիւններ եւ քիւրտեր:



ՎԱԳՐ

Վագրը կատուներու ընտանիքին ամենէն խոշոր ներկայացուցիչն է: Անոր մորթը շերտաւոր սել ու դեղին է: Ժամանակին, երկրի վրայ կային վագրերու 9 տարբեր տեսակ, սակայն մինչ օրս անոնցմէ պահպանուած են միայն 6 տեսակներ:

Էգը իր առաջին սերունդը կրնայ ունենալ 4 տարեկանին: Գարնան եղանակին, ան կը ծնի 1.5 քկ. 2-4 հատ կոյր ու խուլ ձագեր, որոնք մէկ շաբաթ ետք իրենց աչքերը կը բանան, իսկ երկու շաբաթ ետք կը սկսին լսել ու սողալ:

Մայր վագրը ձագերուն համար անմատչելի քարայր մը կ'ընտրէ: Մէկ ամիս անց, ձագերը կրնան դուրս գալ քարայրէն եւ սնունդ ապահովել: 4 տարեկանին անոնք կը սկսին ապահովել իրենց սնունդը, որովհետեւ իրենց մօրմէն սորված կ'ըլլան որսորդութեան բոլոր գաղտնիքները:

